ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«29» ապրիլ 2025թ. ՆՄՈ/516-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N393 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՄԵԾԱՄՈՐԻ N1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ», «ԼԵՌՆԱԳՈԳԻ ՕՆԻԿ ՓԱԿՈՒՄԵԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ», «ՊՏՂՈՒՆՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ԵՎ «ԱԼԱՇԿԵՐՏԻ Հ.ՔՈՉԱՐԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման 5.4-րդ և 6-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի փետրվարի 13-ի ՆՄՈ/218-Ա, 2025 թվականի ապրիլի 4-ի ՆՄՈ/443-Ա, ՆՄՈ/446-Ա և 2025 թվականի ապրիլի 22-ի ՆՄՈ/477-Ա որոշումները.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N393 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված N8 հավելվածի «Մեծամորի N1 հիմնական դպրոց», N9 հավելվածի «Ալաշկերտի Հ. Քոչարի անվան միջնակարգ դպրոց», N91 հավելվածի «Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց» և N104 հավելվածի «Լեռնագոգի Օնիկ Փակումեանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN1-4 հավելվածների:
2. Հաստատել «Մեծամորի N1 հիմնական դպրոց», «Ալաշկերտի Հ. Քոչարի անվան միջնակարգ դպրոց», «Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց» և «Լեռնագոգի Օնիկ Փակումեանի անվան միջնակարգ դպրոց»պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունները՝ համաձայն NN1-4 հավելվածների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

2025-04-29 17:54:05 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆ-ի կողմից

Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2025 թվականի ապրիլի 29-ի ՆՄՈ/516-Ա որոշման

«Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2017 թվականի հոկտեմբերի 18-ի N393 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1. «Մեծամորի N1 հիմնական դպրոց»
2. «Ալաշկերտի Հ. Քոչարի անվան միջնակարգ դպրոց»
3. «Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց»
4. «Լեռնագոգի Օնիկ Փակումեանի անվան միջնակարգ դպրոց»

:»:

Գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**

29.04.2025

VERIFIED OCSP 29.04.2025 17:31:16 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023